

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՍԷՍԹԻ ՍՊԸ-ն ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	սեղաններ	սեղաններ	սեղաններ	ՌԴ, ՀՀ	"Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Բարուրի սեղանը պետք է պատրաստված լինի Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից (օրինակ՝ փայտից (հաճար, սոճի, կեչի)), պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, Էկոլոգիապես մաքուր և առողջության համար

անվտանգ նյութերով,
լաքապատված (Էկոլոգիապես
մաքուր և առողջության համար
անվտանգ նյութերով), անկյունները
պետք է լինեն կլորացված կամ
անկյուններին ամրացվեն
պոլիմերային կամ ռետինե՝
անվտանգությունն ապահովող
հատուկ դետալներ: Պետք է լինեն
ամուր՝ պատրաստված մաշակայուն
նյութերից, ինչը շահագործման
ընթացքում ի հայտ չգալու
պարագայում մատակարարը
պարտավորվելու է սեղմ
ժամկետներում փոխարինել
մատակարարված ապրանքը և/կամ
կատարել համապատասխան
վերագինում կամ ամրացում: Պետք է
ապահովվի էսթետիկությունը,
մասնավորապես՝ գունավորումը,
նկարագրողումը կամ
լաքապատումը պետք է կատարվի
որակյալ, հստակ գունավորմամբ,
առանց արտադրական խոտանների:
Պետք է ապահովվի
երգոնոմիկությունը, այսինքն՝
մատակարարվող գույքը պետք է
լինի համապատասխան հասակային
խմբի չափսային պահանջներով,

ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Արտաքին չափսերն են՝ 1000 x 600 x 700 մմ (L x Խ x Բ): Երեխայի անվտանգության համար բարուրի սեղանի երեսին՝ կողքերի և հետևի մասում տեղադրվում է անվտանգության բախարգելներ 250 մմ բարձրության: Բարուրի սեղանի տակի պահարանը պատրաստվում է լամինացված 18 մմ հաստությամբ նույն E0 դասի ՓՏՍ-ով, որի եզրերը պետք է շրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC կամ համարժեք) բաժանված, կիսված է երկու մասի, համապատասխանաբար՝ 1) 700 x 600 x 700 մմ (L x Խ x Բ) 2) 300 x 600 x 700 մմ (L x Խ x Բ), 1)-ին՝ ձախ մասը մեկ դռնով, որը ամրանում է երկու ծխնիով, ամբողջական պահարան է սրբիչները կախելու համար (ներսում տեղադրված չորս մետաղական բարձրորակ կախիչով): 2)-րդ՝ աջ մասը բաժանված է երկու դարակների՝ և նախատեսված է կեղտոտ

սպիտակեղենի համար: Դարակների դիմային հատվածները պատրաստված են նույն նյութից (օրինակ՝ փայտից(հաճար, սոճի, կեչի)), իսկ ներսի մասերը լամինացված 18 մմ հաստության E0 դասի ՓՏՍ-ից, որոնց եզրերը կշրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Դարակները և դուռը պետք է ունենան մետաղական օվալաձև բռնակներ: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն գույնի: Բարուրի սեղան-պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև և ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված-ամրացված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 900 x 600 x 100 մմ (L x Խ x Բ), որի հատակին հավող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկ մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Բոլոր միացումներն իրականացնել

				<p>այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): "</p>
--	--	--	--	---